

3.3. ԿԱՆԱԴԱ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

ԳՈՀԱՐ ՈՍԿԱՆՅԱՆ
10.07.2021-06.09.2021

Ներածություն: Կանադան տարածքի մեծությամբ աշխարհի երկրորդ երկիրն է՝ մոտավորապես 10 մլն քառ. կմ մակերեսով: Այն սահմանակից է 3 օվկիանոսների (արևմուտքում՝ Խաղաղ օվկիանոսը, արևելքում՝ Ատլանտյան և հյուսիսում՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը): Մայրաքաղաքը Օտտավա գետի ափին գտնվող Օտտավան է, որը Կանադայի 4-րդ ամենամեծ քաղաքն է: Կանադան ունի 10 նահանգ և 3 տարածաշրջան՝ յուրաքանչյուրն իր մայրաքաղաքով¹: 2020 թ. Կանադայի բնակչությունն ավելի քան 37.7 մլն մարդ էր, որը կազմում է աշխարհի բնակչության ընդամենը 0.48 %-ը: Բնակչության 81.3 %-ը ապրում է քաղաքային բնակավայրերում: Բնակչության միջին տարիքը 41.1 տարեկան է²:

Կանադան Յոթնյակի խմբի անդամ է (Group of Seven (G-7)), որն իրենից ներկայացնում է միջկառավարական կազմակերպություն՝ կազմված աշխարհի գերզարգացած տերություններից (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Միացյալ Նահանգներ, Միացյալ Թագավորություն և Կանադա): G-7-ի նպատակն է՝ քննարկել և լուծել գլոբալ, մասնավորապես՝ տնտեսական խնդիրները³: G-7-ին է բաժին հասնում գլոբալ տնտեսական հարստության 67 %-ը: 1.741 տրիլիոն դոլար ՀՆԱ-ով Կանադան զարգացած տնտեսություն ունեցող երկրներից է, որի հաջողությունը պայմանավորված է հիմնականում տնտեսության դիվերսիֆիկացմամբ: Ազգային ստացման հիմնական աղբյուրներն են նավթը և գազը, էներգետիկան, արտադրությունը և զբոսաշրջիկությունը:

Հաշվի առնելով նավթի գնի կտրուկ տատանումների բացասական ազդեցությունը՝ Կանադան մեծացրել է ներդրումներն էներգիայի ստացման այլ աղբյուրներում, ինչպիսին է հիդրոէլեկտրաէներգիան: Աշխարհագրական և մշակութային բազմազանության շնորհիվ Կանադան տարեկան ընդունում է 22 մլն միջազգային զբոսաշրջիկներ՝ տուրիզմը դարձնելով տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը⁴: Ծառայությունների ոլորտը գերակա ոլորտներից է, որտեղ ներգրավված է բնակչության 3/4-ը: Այլ կարևոր ոլորտներ են

¹ Welcome to Canada, What you should know, 2013, p. 148, p. 17-22, <https://www.canada.ca/content/dam/ircc/migration/ircc/english/pdf/pub/welcome.pdf>

² <https://www.worldometers.info/world-population/canada-population/#:~:text=Canada%202020%20population%20is%20estimated,of%20the%20total%20world%20population.>

³ <https://www.investopedia.com/terms/g/g7.asp>

⁴ <https://www.investopedia.com/articles/investing/042315/fundamentals-how-canada-makes-its-money.asp>

համարվում տրանսպորտը, փայտանյութի, թղթի, քիմիկատների արտադրությունը, հանքանյութերը, բնական գազը, ձկնաբուծությունը և այլն: Աշխարհի երկրորդ ամենախոշոր նավթի պաշարները գտնվում են Կանադայում¹:

Որպես բրիտանական թագի տակ գտնվող երկիր՝ Կանադայում պետական-մասնավոր գույքի հարաբերակցությունը կազմում է 60:40: Այն աշխարհի ամենաբարձր տնտեսական ազատություն ունեցող երկրներից է: Արտասահմանյան ներդրումների ծավալները տարիների ընթացքում աճել են, ինչը բացատրվում է նրանով, որ օտարերկրյա ներդրողները Կանադան դիտարկում են որպես ապահով ներդրումային միջավայր ունեցող երկիր²:

COVID-19-ն իր բացասական ազդեցությունը թողեց նաև Կանադայի տնտեսության, հատկապես ծառայությունների ոլորտի վրա, որտեղ մարդկային շփումներն ավելի մեծ են: Ինչպես աշխարհի շատ երկրներում, այստեղ ևս պետությունը մշակել և իրականացրել է աջակցության ծրագրեր, որոնք նպաստել են տնտեսական անկման ռիսկերի նվազեցմանը և երկարատև տնտեսական անկումից զերծ մնալուն³:

Կանադան գյուղատնտեսական մթերք արտահանող աշխարհի 5-րդ ամենախոշոր երկիրն է, որն արտահանում է իր արտադրանքի գրեթե կեսը: Տարեկան արտահանումները կազմում են 56 մլրդ կանադական դոլար: ՏՀԶԿ-ն կանխատեսում է, որ գյուղատնտեսական մթերքների գլոբալ պահանջարկի աճը նոր հնարավորություններ կբացի Կանադայի համար: Կանադայի զարգացած մատակարարման շղթաները դուրս են գալիս նրա սահմաններից՝ հաղթահարելով տարբեր տեխնիկական կարողություններ, ներմուծման մատակարարման շղթաներ և բիզնես մշակույթ ունեցող երկրների հետ կապված խոչընդոտները: Նրանք գործում են միջազգայնորեն մրցունակ միջավայրում, որը ավելի շատ ցնցումների պատճառ է՝ ագրոնոմիական, լոգիստիկ և քաղաքական առումներով: Իսկ 2020 թ. այդ ցնցումներին ավելացան նաև COVID-19-ի համաճարակի հետ կապված խնդիրները: Գյուղատնտեսական մատակարարման շղթաները չեն կարող անմիջապես դիմակայել ցնցումներին: Մթերքը, որն այսօր հասնում է սպառողներին, ամիսներ կամ նույնիսկ տարիներ առաջ կայացրած որոշումների արդյունք է: Դա մի գործընթաց է, որը հնարավոր չէ հեշտությամբ կառավարել և փոփոխել: Ցնցումների վերացումը ժամանակ է պահանջում և կարող է ունենալ լայնածավալ հետևանքներ: COVID-19-ը բերեց ցնցումներ Կանադայի համար ինչպես ներքին գյուղատնտեսական մթերքի, այնպես էլ միջազգային արտահանման շուկաների համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ

¹ <https://canadianvisa.org/life-in-canada/economy/structure>

² <https://canadianvisa.org/life-in-canada/economy/basic-information>

³ Unprecedented in every way, Economic outlook, Deloitte, June 2020, 16p., p. 1,

<https://www2.deloitte.com/content/dam/Deloitte/ca/Documents/finance/ca-economic-outlook-report-june-2020-aoda-en.pdf>

գյուղատնտեսական մթերքների մատակարարման կանադական շղթաները ֆերմերներից մինչև սպառողներ հասցնելու ճանապարհին կայուն են¹: Այս ամենով է պայմանավորված հողվածի արդիականությունը և կատարման անհրաժեշտությունը: Հետազոտության նպատակն է բացահայտել Կանադայի գյուղատնտեսության առանձնահատկությունները և ներկայացնել դրանց ներդրման հնարավորություններն ու ուղիները ՀՀ-ում: Այդ նպատակով խնդիր է դրվել ուսումնասիրել Կանադայի գյուղատնտեսության զարգացման պատմությունը, ճյուղի կառուցվածքը, ֆերմերների վարքագիծը, պետական աջակցության ծրագրերը և այլն:

Գրականորթյան ակնարկ: Ինչպես արդեն նշել ենք, գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի Կանադայի համար և էական փոփոխությունների է ենթարկվել ժամանակի ընթացքում: Բացարձակ արտահայտությամբ գյուղատնտեսական համախառն արտադրանքն էականորեն աճել է: Օրինակ՝ ցորենի արտադրության ծավալները 1908-2008 թթ. ընթացքում գրեթե եռապատկվել են: Ներկայում համեմատաբար շատ են մշակվում նոր մշակաբույսեր, որոնցից է մի շարք բարելավված սորտերից ստացված կանոլան: Առաջին համաշխարհային պատերազմից հետո աճ է գրանցվել նաև անասնաբուծության ճյուղում: Այսպես, խոշոր եղջերավոր կենդանիների և հորթերի քանակը կրկնապատկվել է, խոզերինը՝ քառապատկվել: Թռչունների, մասնավորապես՝ հավերի թիվը ևս բավականին աճել է: Միննույն ժամանակ նկատենք, որ գյուղատնտեսությունը կազմում է Կանադայի ՀՆԱ-ի ընդամենը 1-2 %-ը և ապահովում ընդհանուր զբաղվածության 2 %-ը: Այսպիսի կառուցվածքը բնորոշ է զարգացած երկրներին: Ժամանակի ընթացքում գյուղատնտեսության արտադրողականությունը բավականին աճել է և՛ բերքատվության, և՛ մթերատվության, և՛ ընդհանուր աճի գործոնների առումներով:

Կանադայում գյուղատնտեսական նշանակության հողային ֆոնդը 67.8 մլն հա է, որը կազմում է Կանադայի ընդհանուր հողային ֆոնդի ընդամենը 7 %-ը և կենտրոնացած է հիմնականում երկրի հարավային մասում: 1980-ականներից սկսած՝ կանադացի ֆերմերները դարձան ավելի մասնագիտացված, իսկ գյուղատնտեսությունն՝ ավելի դիվերսիֆիկացված: Հացահատիկային մշակաբույսերից (հիմնականում ցորեն և գարի), անցում կատարվեց դեպի ավելի բարձրարժեք մշակաբույսեր, ինչպիսիք են յուղատու սերմերը, գլխավորապես կանոլան, դաշտային ոլոռն ու ոսպը:

Ժամանակի ընթացքում Կանադայի ֆերմերների քանակը նվազել է, ինչը բացատրվում է տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության հնարավորությունների աճով: Այսպես, 1941 թ.

¹ May T. Yeung and William A. Kerr, Canadian agri-food export opportunities in a COVID-19 world, February 2021, 42 p. , p. 1-2 <https://www.policyschool.ca/wp-content/uploads/2021/02/Agri-Food-Export-Yeung-Kerr.pdf>

Ֆերմերների թիվը եղել է 732 000, իսկ 2016 թ.՝ 194 000-ից քիչ: Այսինքն՝ 75 տարվա ընթացքում այս ցուցանիշը նվազել է մոտավորապես 75 %-ով¹: Մեկ գյուղացիական տնտեսության միջին չափը 295 հա է. նվազագույնը՝ 100 հա, առավելագույնը՝ 600 հա: Կանադայի գյուղացիական տնտեսությունների մոտավորապես 40 %-ը զբաղված է բուսաբուծության ճյուղում, որին հաջորդում է տավարաբուծությունը, որտեղ կենտրոնացած է ֆերմերների 26.6 %-ը: Տարբեր նահանգներում և տարածաշրջաններում գյուղատնտեսական մասնագիտացումը տարբեր է: Այսպես, եթե Բրիտանական Կոլումբիայում մշակվում են հիմնականում մրգեր և բանջարեղեն, ապա Ատլանտյան Կանադայում գերակշռում է կաթնամթերքի արտադրությունը և կարտոֆիլի մշակությունը: Գյուղատնտեսությունում զբաղվածների տարիքն աստիճանաբար մեծանում է: Եթե 1991 թ. ֆերմերի միջին տարիքը եղել է 47.5 տարեկան, 2007թ.՝ 52, ապա 2016 թ.՝ 55 տարեկան²:

Մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, վերլուծական և համեմատական մեթոդները: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ արտագյուղատնտեսական գործունեությունում ընդգրկվածների թիվը ժամանակի ընթացքում աճել է: Տարեկան մինչև 250000 կանադական դոլար համախառն եկամուտ ստացող ֆերմերներն ավելի հակված են ներգրավվելու արտագյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեության տեսակներում, քան բարձր եկամուտ ստացող ֆերմերները: Ավելացված արժեքի գործողությունների մեծ մասն ուղղակիորեն վերաբերում է գյուղատնտեսական գործունեությանը, քանի որ անմիջական վաճառքը կամ վերամշակումն իրականացվում է հենց ֆերմայում: Ոչ գյուղատնտեսական բիզնեսը վերաբերում է ծառայություններին և առևտրին: Ըստ տվյալների՝ տնային տնտեսությունների 7 %-ը բիզնես է իրականացնում ծառայությունների ոլորտում, 4 %-ը՝ վաճառքի ոլորտում, 3 %-ն ունի շինարարական բիզնես, 1 %-ը վերամշակման ոլորտում է, 1 %-ն ընդգրկված է այլ ոլորտներում: Ըստ տվյալների՝ ոչ գյուղատնտեսական բիզնեսում միջին եկամուտը տատանվում է 12000-63000 կանադական դոլարի սահմաններում: Կենսավառելիքի արտադրությունը ևս համարվում է ոչ գյուղատնտեսական գործունեություն: Էթանոլը, որը գլխավորապես ստացվում է ցորենից և եգիպտացորենից, աճող կենսավառելիքի արդյունաբերություն է Կանադայում և խրախուսվում է ֆեդերալ կառավարության կողմից: Կենսավառելիքի խթանումը Կանադայում սկսվել է 1990-ականներին, հարկային արտոնությունների միջոցով: Բացի այդ, կառավարությունը մշակել է ծրագիր, որի նպատակն է պաշտպանել արտադրողներին կենսավառելիքի հետ կապված քաղաքականություններում փոփոխությունների ազդեցությունից: Մեկ այլ

¹ Hongyu Chen and others, A Historical Review of Changes in Farm Size in Canada, January 2019, 30 p., p. 2, <http://forecastinstitute.com/documents/Farm-Size-Historical-Review-2019-03.pdf>

² <https://www150.statcan.gc.ca/n1/pub/96-325-x/2014001/article/11905-eng.htm>

ծրագիր էլ ուղղված է էթանոլի արդյունաբերության ընդլայնման ուղղությամբ ներդրումների աջակցությանը: Էթանոլի աջակցության քաղաքականության մի այլ ծրագիր էլ, որը մշակվել է 2006 թ., նպատակ ունի խթանել կենսավառելիքի սպառումը: Քաղաքականության հիմնական միտումն էր՝ ընդլայնել կենսավառելիքի սպառումն ընդհանուր վառելիքի սպառման նկատմամբ:

Արտագյուղատնտեսական ներգրավվածության վրա ազդում են մի շարք գործոններ, ինչպիսիք են ֆերմերների կրթվածության աստիճանը, զբաղվածության մակարդակը, տարածաշրջանային գործազրկության մակարդակը, դիվերսիֆիկացված ռեզիդենսալ տնտեսությունը, քաղաքներից հեռավորությունը և այլն:

Վերլուծություն: Կանադայում ֆերմերային տնային տնտեսությունների բարեկեցությունն աստիճանաբար էլ ավելի շատ է կապվում ոչ գյուղատնտեսական գործունեության հետ. ֆերմերների գրեթե կեսը ներկայացրել է, որ իրենց եկամուտների մոտավորապես կեսը ստացվում է ոչ գյուղատնտեսական գործունեությունից: Կանադայի գյուղատնտեսության համար առանձնահատուկ նշանակություն ունի առևտուրը ԱՄՆ-ի հետ: Հատկապես կարմիր մսի ոլորտը վերջին 15 տարիների ընթացքում բավականին ինտեգրվել է Հյուսիսային Ամերիկայի շուկային: Հացահատիկային մշակաբույսերի արտադրությամբ Կանադան զբաղեցնում է աշխարհում 8-րդ տեղը, իսկ մսի արտադրությամբ՝ 10-րդ տեղը: Ժամանակի ընթացքում, միավորման և մասնագիտացման աճին զուգընթաց, Կանադայի գյուղատնտեսության ոլորտը բնութագրվում է ավելի քիչ, բայց ավելի խոշոր ֆերմերային տնտեսություններով: Ինչպես զարգացած շատ երկրներում, այնպես էլ Կանադայում հիմնականում խոշոր գյուղացիական տնտեսություններն են արտադրում գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը: Ֆերմերների եկամուտների մասով կարևոր գյուղատնտեսական մթերքներ են կարմիր միսը, հացահատիկային և յուղատու սերմերը, հատկապես ցորենը և կանուլան, ինչպես նաև կաթնամթերքը: Կանադացի ֆերմերները դիվերսիֆիկացնում են իրենց արտադրությունը՝ նոր շուկաներ դուրս գալու, ավելացված արժեքը մեծացնելու և ռիսկերն ավելի արդյունավետ կառավարելու միջոցով: 1960 թ. համեմատ մի շարք կարևոր մշակաբույսերի բերքատվությունն աճել է մոտավորապես 60 %-ով: Բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը 1961-2005 թթ. շարունակաբար աճել է տարեկան 4.7 %-ով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում գյուղատնտեսական հետազոտությունների և զարգացման (R&D) վրա ծախսերի կրճատումը դարձել է արտադրողականության դանդաղ աճի պատճառներից մեկը, հատկապես բուսաբուծության ճյուղում: Կանադայում, ինչպես Միացյալ Նահանգներում, գյուղատնտեսական R&D-ն հեռացել է բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերից դեպի այլ առաջնահերթ ոլորտներ, ինչպիսիք են պարենային անվտանգությունը և

շրջակա միջավայրը: Գյուղատնտեսական հետազոտությունների ֆինանսավորման ավելացումը կօգնի հակազդել բերքատվության և մթերատվության նվազեցմանը¹:

2016 թվականից փետրվարի 23-ը նշվում է որպես Կանադայի Գյուղատնտեսության օր: Այդ օրը նվիրված է պարենին և այն արտադրող անձանց, ովքեր ամեն օր քրտնաջան աշխատում են բնակչությանն ապահով և համեղ սննդով ապահովելու համար: Այդ օրը Կանադայի ամբողջ բնակչությունը շնորհավորում և շնորհակալություն է հայտնում գյուղատնտեսությունում ներգրավված անձանց, ովքեր աշխատասեր են և նորարար, գնահատում են ընտանիքը, համայնքը, կայունությունը և նվիրել են իրենց կյանքը արտադրելու համար անվտանգ, առողջ սնունդ կանադացիների և իրենց ընտանիքների համար: Կանադայի Գյուղատնտեսության օրը նշելու հիմնական խորհուրդն այն է, որ կանադացիներն ավելի լավ պատկերացնեն, թե որտեղից է իրենց սնունդը գալիս, իմանան ավելի Կանադայի գյուղատնտեսության և պարենի մասին և ճանաչեն այն քչերին, ովքեր կերակրում են շատերին: Ամեն տարվա համար մշակվում է ծրագիր, թե ինչպես պետք է նշվի այդ օրը, որի շրջանակներում կազմակերպվում են տարատեսակ միջոցառումներ²:

Կանադայի գյուղատնտեսության առանձնահատկություններից մեկն այն է, որ ֆերմերները, բացի գյուղատնտեսական գործունեությունից, զբաղված են այլ ոլորտներում ևս, որոնք բաժանվում են երեք խմբի.

- 1. արտագյուղատնտեսական զբաղվածություն,*
- 2. ավելացված արժեքի գործունեություններ,*
- 3. ոչ գյուղատնտեսական բիզնես:*

Արտագյուղատնտեսական զբաղվածությունը վճարովի աշխատանք է, որը կատարում է ընտանիքի անդամը գյուղատնտեսությունից դուրս: Արժեք ավելացնող գործունեությանն է վերաբերում գյուղացիական տնտեսության անդամի կողմից կատարվող այնպիսի աշխատանքները, որոնցից են գյուղատնտեսական մթերքների մշակումը, գյուղատնտեսական տուրիզմը կամ գյուղատնտեսական արտադրանքի ուղղակի վաճառքը: Ոչ գյուղատնտեսական բիզնեսը վերաբերում է տնային տնտեսությունների կողմից վարվող ոչ գյուղատնտեսական բիզնեսին և կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են վերանորոգման, տրանսպորտային, առևտրային և մասնագիտական ծառայությունները:

Կանադայի նահանգների մեծ մասը չունի հատուկ նախարարություն

¹ Terrence S. Veeman and Richard Gray, Agricultural production and productivity in Canada, 2009, Choices, The Magazine of Food, Farm and Resource Issues,

² <https://www.farmfoodcarepei.org/canadas-ag-day/?fbclid=IwAR3V1XVmVCmubgl5ir65TrDYptuu7dLFvV0TGYJ8jD99QZnG0BrFUJ5RTiY#:~:text=Canada's%20Agriculture%20Day%20is%20about,safe%2C%20healthy%20and%20delicious%20food>

կամ դեպարտամենտ, որը զբաղվում է գյուղատնտեսության դիվերսիֆիկացիայով: Սովորաբար առկա են մի քանի ֆեդերալ, նահանգային և մունիցիպալ գործակալություններ, որոնք ներառված են գյուղական տուրիզմի հետ կապված գործընթացներում, ինչպես նաև մասնակցում են օրենքների մշակման և դրանց կիրառման գործընթացներում: Որոշ հեղինակներ գտնում են, որ չնայած նահանգային մակարդակով չկան ագրոտուրիզմը կարգավորող իրավական ակտեր, այնուամենայնիվ նահանգային մակարդակում կան գյուղական տուրիզմը խթանող և կարգավորող իրավական ակտեր: Օրինակ՝ Բրիտանական Կոլումբիա նահանգում առկա են 35 տարբեր օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարգավորում են ագրոտուրիզմի ոլորտը:

Գյուղական համայնքներում նոր բիզնեսների զարգացման համար առկա աջակցությունը սովորաբար կենտրոնացած է համայնքների կենտրոնների փոքր բիզնեսների վրա: Այս ծրագրերի մեծ մասը հիմնված է պետական գործակալությունների և տեղական կազմակերպությունների միջև համագործակցության վրա: Այս ծրագրերի մի մասի նպատակն է բարձրացնել շահառուների կարողությունները և հմտությունները՝ մշակելու և գնահատելու բիզնես ծրագրեր և ձեռք բերելու նոր ձեռնարկություններ ստեղծելու համար անհրաժեշտ մեկնարկային կապիտալը: Բացի այդ, շատ համայնքներում առկա են բիզնեսի զարգացման մի շարք ծառայություններ (օրինակ՝ հաշվապահական ծառայություններ, բիզնես խորհրդատվություն, որակի վերահսկման և արտահանման աջակցության ծրագրերի ֆինանսական ծառայություններ)՝ նոր ձեռնարկությունների գործունեությունն աջակցելու համար: Ինտերնետի օգտագործումը ևս դարձել է տարածված ծառայություն գյուղական շատ համայնքներում: Որոշ ծրագրեր ուղղված են գյուղատնտեսության և ագրոպարենային ոլորտի մրցունակության բարձրացմանը և սպառման ավելացմանը: Բացի այդ, առկա են մի շարք արտադրական ասոցիացիաներ, այդ թվում՝ նաև ֆերմերների շուկայական ասոցիացիաներ և այլ տեղական զարգացման գործակալություններ, որոնք այս կամ այն ձևով աջակցում են ֆերմերների նախաձեռնություններին: Այս ասոցիացիաների կողմից մշակված ամենաընդհանուր ծառայություններն են տեղեկատվության, խորհրդատվության տրամադրումը, արտադրությունում վերապատրաստումը, ապրանքների մշակումը, իրենց արտադրանքի գովազդը և մարքեթինգը: Մունիցիպալ կառավարման, լոկալ բիզնես խմբերի և ֆերմերների միջև մի շարք համագործակցությունների միջոցով ստեղծվել է համապատասխան միջավայր ֆերմերների շուկաների վերածննդի համար: Ֆերմերների շուկաների ասոցիացիաները, բացի ուղղակի վաճառքի հետ կապված օգնությունից, նաև տրամադրում են լրացուցիչ ծառայություններ ֆերմերներին, ինչպիսիք են գովազդը, թարմացված տեղեկատվության տրամադրումը, մարքեթինգի, կարգավորման, պարենային անվտանգության և այլնի հետ կապված ֆերմերների

հետաքրքրությունների մասին կրթական սեմինարների կազմակերպումը և զարգացնելով քարոզչական արշավներ, որոնք խրախուսում են սպառողներին գնել թարմ և տեղական մթերք:

Կանադայում բավականին տարածված և զարգացած է ագրոտուրիզմը, որը չափվում է զբոսաշրջիկների այցերով (տարեկան 211 մլն այց): Այցերի 83 %-ը բաժին է հասել կանադացի զբոսաշրջիկներին, 12 %-ը՝ ամերիկացի զբոսաշրջիկներին և 5 %-ը այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկներին: Տվյալ տարածքում զարգացած ագրոտուրիզմի գործունեության տեսակները մասամբ որոշվում են ըստ տարածաշրջանի ավանդույթների և առանձնահատկությունների: Օրինակ՝ Ալբերտա և Բրիտանական Կոլումբիա նահանգներն ունեն ամենահայտնի արձակուրդային ռանչները, որոնք հիմնված են աշխատող անասնազուգների վրա, որտեղ զբոսաշրջիկները կարող են մեկնել և մեկ շաբաթ անցկացնել «իրական» անասնաբույծի ապրելակերպով: Այս հաստատություններում առավել հաճախ առաջարկվող գործողությունները ներառում են բնության դիտումը (ներառյալ թռչունները, եղջերուները և եղնիկները), որսորդությունը և լուսանկարչությունը: Ագրոտուրիզմը հիմնականում ակտիվ է ամռան և աշնան ամիսներին: Չմեռային ագրոտուրիզմը սահմանափակվում է մի քանի օպերատորներով, որոնք առաջարկում են այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ձնահավաքը, վայրի բնության դիտումը և ընթրիքը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ագրոպարենային համակարգի բազմապատկիչի էֆեկտը ազդում է լրացուցիչ ՀՆԱ-ի ստեղծման և տնտեսության այլ ոլորտներում զբաղվածության վրա: Օրինակ՝ ուղղակի ՀՆԱ-ի յուրաքանչյուր 1 կանադական դոլարի ստեղծումը գյուղատնտեսությունում ուղղակիորեն բերում է ՀՆԱ-ի 1.8 կանադական դոլարով ավելացմանը և 0.91 անուղղակի աշխատատեղերի ստեղծմանը: Պարենի վերամշակման ոլորտում ստեղծված յուրաքանչյուր 1 կանադական դոլարը նպաստում է ՀՆԱ-ի 1.81 կանադական դոլարով ավելացմանը: Նման ձևով այս ոլորտում ստեղծված յուրաքանչյուր աշխատանք բերում է այլ 2.55 աշխատատեղերի անուղղակի ստեղծմանը: Օրինակ՝ պարենի վերամշակման ոլորտում ստեղծված յուրաքանչյուր 1 դոլար ՀՆԱ-ի դեպքում բազմապատկիչի էֆեկտը անմիջապես ՀՆԱ-ի վրա 2.81 է, իսկ ընդհանուր ուղղակի զբաղվածությունը ավելանում է 3.55 անգամ¹:

Կանադայի կառավարությունն իրականացնում է տարատեսակ պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակը ֆերմերների եկամուտների կայունացումն է: Ֆերմերների եկամուտների վրա ազդում են 2 հիմնական գործոն՝ արտադրական անկայունությունը (անբարենպաստ եղանակային պայմաններ, հիվանդություններ, վնասատուներ և այլն) և գների

¹ Thomas Gordon Johnson, The Role of Agriculture and Farm Household Diversification in the Rural Economy of Canada, January, 2009, 25 p.

անկայունությունը: Տարիներ շարունակ Կանադայի կառավարությունը տրամադրել է պետական աջակցություն ֆերմերներին, որի նպատակն էր բնական աղետների և ապրանքների անկայուն գների բացասական ազդեցության նվազեցումը: Բնական աղետներից պաշտպանվելու բավականին տարածված գործիք է ապահովագրությունը: Կանադայում մասնավոր ընկերությունները խուսափում են կնքել բազմակի ռիսկերից ապահովագրության պայմանագիր, որի պատճառը գյուղատնտեսության ապահովագրության առանձնահատկություններն են (համակարգային բնույթը և տեղեկատվական անհամաչափությունը): Կանադայում գյուղատնտեսության ապահովագրության գծով տրամադրվող աջակցության ծրագրերը ևս բավականին տարածված են: Որոշ հեղինակներ առաջարկում են հինգ գործոններ, որոնք բնութագրում են Կանադայի ագրարային քաղաքականությունը: Այդ գործոններն են.

1. նահանգների ազդեցության մեծացումը,
2. գյուղատնտեսության կառուցվածքի փոփոխությունը,
3. Միացյալ Նահանգների ազդեցությունը և նրա հակազդող գործողությունները Կանադայի ծրագրերի դեմ,
4. արտադրական որոշումների՝ աջակցության ծրագրերից առանձնացվածությունը,
5. կենտրոնական բյուջեի գործակալությունների կողմից կայուն ֆինանսավորման պահանջների ցանկությունը¹:

Գիտական նորույթը: Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ վեր են հանվել Կանադայի գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները, որոնց հիման վրա մշակվել են հայաստանյան ներկայիս պայմաններում կիրառելի առաջարկություններ:

Եզրակացություն: Կատարված ուսումնասիրությունները հիմք են տալիս անելու հետևյալ առաջարկությունները, որոնք կիրառելի կլինեն հայաստանյան ներկայիս պայմաններում:

1. *Հաշվի առնելով ՀՀ գյուղացիական տնտեսությունների հողակտորների միջին չափը (1.4 հա) և Կանադայում մեկ ֆերմերին բաժին ընկնող միջին հողակտորի չափը (295 հա)՝ միանշանակ անհրաժեշտ է էլ՝ ավելի ակտիվ և գործուն քայլեր կատարել հողերի խոշորացման ուղղությամբ: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ ՀՀ-ն, ի տարբերություն Կանադայի, տարածքի մեծությամբ դասվում է փոքր պետությունների շարքին, սակայն այստեղ ձևավորվել է շուրջ 340000 գյուղացիական տնտեսություն, մինչդեռ Կանադայի նման խոշոր երկրում գործում է 200 000-ից էլ քիչ ֆերմեր: ՀՀ-ում գյուղատնտեսական հողերի խոշորացումը միայն հիմք կարող է հանդիսանալ գյուղատնտեսության զարգացման համար:*

¹ Alison J. Eagle, James Rude, and Peter C. Boxall, Agricultural support policy in Canada: What are the environmental consequences?, NRC Research Press, 13 p., p. 3-6.

2. ՀՀ-ում գյուղատնտեսության վարումը պետք է իրականացվի նորագույն տեխնոլոգիաների և նորարարական մեթոդների կիրառմամբ: Հակառակ դեպքում բարդ կլինի խոսել զարգացած գյուղի և գյուղատնտեսության մասին:
3. Ապահովել համապատասխան միջավայր (ենթակառուցվածքներ, իրավաօրենսդրական դաշտ, պետական աջակցության ծրագրեր և այլն), որը կնպաստի գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության տարածմանն ու զարգացմանը:
4. Տարվա մեջ մեկ օր սահմանել և նշել, որպես «Հայաստանի գյուղատնտեսության օր»: Այս միջոցառումը կօգնի էլ ավելի արժևորելու գյուղն ու գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող մարդկանց և նրանց աշխատանքը: Այն հնարավորություն կտա ազգաբնակչության շրջանում փոխելու վերաբերմունքը և պատկերացումները ագրարային ոլորտի վերաբերյալ, իսկ գյուղացիական տնտեսությունները կլինեն ավելի գնահատված և մոտիվացված:
5. Գյուղական համայնքներում ստեղծել գործակալություններ, որոնք կնպաստեն նորարարական գաղափարների իրականացմանը և կնպաստեն ոչ գյուղատնտեսական գործունեության տարածմանն ու զարգացմանը:

Ներկայացված առաջարկությունները կյանքի կոչելու համար ՀՀ-ում առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները, իսկ դրանց իրագործումը կնպաստի ինչպես ագրարարային ոլորտի, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Alison J. E., James R., and Peter C. Boxall, Agricultural support policy in Canada: What are the environmental consequences?, NRC Research Press, 13 p.
2. Hongyu Ch. and others, A Historical Review of Changes in Farm Size in Canada, January 2019, 30 p., <http://forecastinstitute.com/documents/Farm-Size-Historical-Review-2019-03.pdf>
3. May T. Yeung and William A. Kerr, Canadian agri-food export opportunities in a COVID-19 world, February 2021, 42 p. <https://www.policyschool.ca/wp-content/uploads/2021/02/Agri-Food-Export-Yeung-Kerr.pdf>
4. Terrence S. V. and Richard G., Agricultural production and productivity in Canada, 2009, Choices, The Magazine of Food, Farm and Resource Issues,
5. Thomas Gordon Johnson, The Role of Agriculture and Farm Household Diversification in the Rural Economy of Canada, January, 2009, 25 p.
6. Unprecedented in every way, Economic outlook, Deloitte, June, 2020, 16 p., <https://www2.deloitte.com/content/dam/Deloitte/ca/Documents/finance/ca-economic-outlook-report-june-2020-aoda-en.pdf>
7. Welcome to Canada, What you should know, 2013, p. 148, p. 17-22,

- <https://www.canada.ca/content/dam/ircc/migration/ircc/english/pdf/pub/welcome.pdf>
8. <https://www.worldometers.info/world-population/canada-population/#:~:text=Canada%202020%20population%20is%20estimated,of%20the%20total%20world%20population.>
 9. <https://www.investopedia.com/terms/g/g7.asp>
 10. <https://www.investopedia.com/articles/investing/042315/fundamentals-how-canada-makes-its-money.asp>
 11. <https://canadianvisa.org/life-in-canada/economy/structure>
 12. <https://canadianvisa.org/life-in-canada/economy/basic-information>
 13. <https://www150.statcan.gc.ca/n1/pub/96-325-x/2014001/article/11905-eng.htm>
 14. <https://www.farmfoodcarepei.org/canadas-ag-day/?fbclid=IwAR3V1XVmVCmubgl5ir65TrDYptuu7dLFvV0TGyJ8jD99QZnG0BrfUJ5RTiY#:~:text=Canada's%20Agriculture%20Day%20is%20about,safer%20healthy%20and%20delicious%20food>

ԿԱՆԱԴԱ. ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

ԳՈՀԱՐ ՈՍԿԱՆՅԱՆ

Համառոտագիր: Հողվածի նպատակն է՝ ուսումնասիրել Կանադայի տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության վարման ընդհանուր մոտեցումներն ու առանձնահատկությունները, որոնց հիման վրա ներկայացնել ՀՀ-ում այդ մոտեցումների կիրառման հետ կապված հստակ առաջարկություններ: Դրված նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են Կանադայի աշխարհաքաղաքական դիրքը, տնտեսության կառուցվածքը և առաջատար ճյուղերը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Կանադան աշխարհի տնտեսապես զարգացած երկրներից է և հանդիսանում է G 7 խմբի անդամ: Կարևորելով գյուղատնտեսության դերն ու նշանակությունը ինչպես Կանադայի, այնպես էլ Հայաստանի համար՝ ավելի մանրամասն ուսումնասիրվել և ներկայացվել է այս ոլորտը: Մասնավորապես՝ ներկայացվել են Կանադայի գյուղատնտեսությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, որոնցից են հիմնական մշակաբույսերը, ֆերմերային տնտեսությունների քանակը, դրանց միավոր հողակտորի միջին չափը և այլն: Ժամանակի ընթացքում Կանադայի ֆերմերների քանակը նվազել է. ինչը բացատրվում է տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության հնարավորությունների աճով: Կանադայի գյուղական համայնքներում բնակչության եկամտի հիմնական աղբյուրը միայն գյուղատնտեսական գործունեությունը չէ: Ֆերմերների հիմնական մասը ներգրավված է նաև ոչ գյուղատնտեսական աշխատանքներում՝ հաճախ ապահովելով եկամտի հիմնական մասը ոչ գյուղատնտեսական գործունեությունից: Կանադայում բավականին տարածված և զարգացած է ագրոտուրիզմը, որը չափվում է զբոսաշրջիկների այցերով: Ագրարային ոլորտի զարգացման համար շատ կարևոր է

պետական աջակցության միջոցառումների իրականացումը: Այս առումով Կանադայի կառավարությունը ագրարային հստակ քաղաքականություն է վարում, որի հիմնական նպատակը ֆերմերների եկամուտների կայունացումն է: 2016 թվականից փետրվարի 23-ը նշվում է որպես Կանադայի Գյուղատնտեսության օր: Այդ օրը նվիրված է պարենին և այն արտադրող անձանց, ովքեր ամեն օր քրտնաջան աշխատում են բնակչությանն ապահով և համեղ սնունդ ապահովելու համար: Հողվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ վեր են հանվել Կանադայի գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները, որոնց հիման վրա մշակվել են հայաստանյան ներկայիս պայմաններում կիրառելի առաջարկություններ:

Բանալի բաներ՝ տնտեսություն, գյուղատնտեսություն, բուսաբուծություն, անասնաբուծություն, ֆերմեր, զբաղվածություն, ագրոտուրիզմ, պետական աջակցություն, ոչ գյուղատնտեսական գործունեություն

КАНАДА. В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

ГОАР ВОСКАНЯН

Аннотация. Цель данной статьи - изучить общие подходы и особенности канадской экономики, в частности сельского хозяйства, на основе которых будут представлены четкие рекомендации по их применению в Армении. Для достижения этой цели были изучены геополитическое положение, структура экономики и ведущие отрасли Канады. Исследования показывают, что Канада - одна из самых экономически развитых стран мира и член G7. Объясняя роль и значение сельского хозяйства как для Канады, так и для Армении, эта область была изучена более подробно. В частности, были представлены основные показатели, характеризующие сельское хозяйство Канады, такие, как основные культуры, количество ферм, средний размер земли и т. д. Со временем количество канадских фермеров уменьшилось. что объясняется развитием технического прогресса, а также возможностями несельскохозяйственной деятельности. В сельских общинах Канады сельское хозяйство - не единственный источник дохода для населения. Большинство фермеров также занимаются несельскохозяйственной деятельностью, часто обеспечивая большую часть своего дохода от несельскохозяйственной деятельности. Агротуризм, который измеряется количеством туристов, довольно распространен в Канаде. Реализация мер государственной поддержки очень важна для развития аграрного сектора. В этой связи правительство Канады проводит четкую аграрную политику, основной целью которой является стабилизация доходов фермеров. 23 февраля с 2016 года отмечается как День сельского хозяйства Канады. Этот день посвящен производителям продуктов питания, которые каждый день упорно трудятся, чтобы обеспечить население безопасной

и вкусной едой. Научная новизна статьи заключается в том, что выявлены особенности развития сельского хозяйства Канады, на основе которых разработаны рекомендации, применимые к нынешним условиям в Армении.

Ключевые слова: экономика, сельское хозяйство, растениеводство, животноводство, фермер, занятость, агротуризм, государственная поддержка, несельскохозяйственная деятельность

CANADA. IN THE CONTEXT OF AGRICULTURAL DEVELOPMENT

GOHAR VOSKANYAN

Abstract. The purpose of this article is to study the general approaches and peculiarities of the Canadian economy, particularly agriculture, on the basis of which to present clear recommendations for the application of these approaches in the Republic of Armenia. To achieve this goal, Canada's geopolitical position, economic structure, and leading industries were studied. Studies show that Canada is one of the most economically developed countries in the world and a member of the G7. Explaining the role and significance of agriculture for both Canada and Armenia, this field was studied in more detail. In particular, the main indicators characterizing Canadian agriculture were presented, such as the main crops, the number of farms, the average size of land, etc. Over time, the number of Canadian farmers has decreased, which is explained by the advancement of technological progress, as well as the opportunities for non-agricultural activities. In rural areas of Canada, the main source of income for the population is not only agricultural activity. The majority of farmers are also engaged in non-agricultural activities, often providing most of their income from non-agricultural activities. Agrotourism, which is measured by the number of tourists, is quite common in Canada. The implementation of state support measures is very important for the development of the agricultural sector. In this regard, the Government of Canada pursues a clear agrarian policy, the main purpose of which is to stabilize farmers' incomes. Since 2016, February 23 has been marked as Canada Agriculture Day. This day is dedicated to food producers, who work hard every day to provide safe and tasty food to the population. The scientific novelty of the article is that the peculiarities of Canada's agricultural development have been identified, on the basis of which recommendations applicable to the current conditions in Armenia have been developed.

Keywords: economy, agriculture, crop production, animal husbandry, farmer, employment, agro-tourism, state support, non-agricultural activity